մէկը, Եզնիկը, իր ժամանակի կրօնական ուղղութեան դէմ: «Մեր բերանները հոտել են պաս պահելուց, եւ մեր լեզուները բթացել են սաղմոսներ երգելուց, իսկ այն, որ պահանջում է մեզանից աստուած, սէր եւ խոնարհութիւն, այն մենք չունենք. միայն մեր շրթունքներով ենք սիրում աստծուն, եւ այդ աշխատանքը իզուր է: Անասունների միս չեն ուտում (աբեղաները), բայց իրանց եղբօրը անյագ կերպով կեղեքում են, գինի չեն խմում, բայց իրանց հոգին արիւնով շաղախում են, ամուսնացածներին ատում են, բայց իրանք իրանց պիղծ խորհուրդներով միշտ պոռնկութիւն են գործում. հագուստների վատն են հագնում, բայց ագահութիւնից այրւում են. այդպիսիներից պէտք է փախչել եւ ոչ թէ նրանց հետ հաղորդակցութիւն ունենալ»...

— Դրանք, — առաջ տարաւ Ասլանը, — որոնց նկարագրում է Եզնիկը, ի հարկէ, պէտք է նրա ժամանակի կեղծաւորները եւ փարիսեցիները համարել, որոնք բարեպաշտական դիմակի ներքոյ սնուցանում էին ամենաանբարոյական կրքեր, թէեւ այդ կեղծաւորները ամէն ժամանակ մեծամասնութիւն են ներկայացրել: Բայց ամենավնասակարը միշտ այն է եղել, երբ այդ աբեղաները անկեղծութեամբ են վերաբերել իրանց ուխտին: Որովհետեւ սպանել, ամէն զօրութիւնից զրկել մարմինը մշտական պահով, ծոմով եւ խիստ ճգնութիւններով, որ նա անընդունակ լինի որեւիցէ ցանկութեան՝ դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ, մի տեսակ հոգեւոր բարբարոսութիւն: Ամէն օր, ամէն ժամ, անդադար միեւնոյն աղօթքների կրկնութեամբ բթացնել միտքը եւ զգայուն, մտածող էակից դարձնել մի տեսակ անգիտակցական մեքենայ՝ դա կատարեալ հոգեսպանութիւն է: Այդ բոլորը միշտ կատարել է մեր անապատներում, նոյնը կը տեսնէք եւ այստեղ: Այդ բոլորը կատարել է մարմնի, հոգու եւ սրտի վատ ցանկութիւնները սպանելու նպատակով: Բայց երբ մարմինը, հոգին եւ սիրտը բռի միջոցներով անընդունակ են դարձնում վատ ցանկութիւնների, շատ բնական է, որ նրանք, միեւնոյն ժամանակ, կը կորցնեն եւ լաւ ցանկութիւնների ընդունակութիւնը: Մարդը այդ դէպքում կը դառնայ մարմնով կենդանի դիակ, իսկ հոգով՝ ապուշ, եթէ չասենք խելագար:

Ասլանի դատողութիւնները շատ գեղեցիկ էին, բայց ես քաղց էի զգում: Ծովային սառն բաղանիքը, որ ալեկոծութեան շնորհիւ վայելեցինք մենք, սաստիկ բաց էր արել իմ ախորժակը: Ես այժմ ոչինչ բանի մասին չէի ափսոսում, որ կորցրինք ծովի մէջ, այլ ափսոսում էի միայն այն տապակած վառեակների եւ սպիտակ լաւաշների մասին, որ Ծովիկը թաշկինակի մէջ կապեց եւ իւր ձեռքով տեղաւորեց մեր նաւակի մէջ: Անհամբերութեամբ սպասում էի աբեղային, որ գար եւ մեզ հրաւիրէր սեղանատունը: Բայց ե՞րբ պի-